Հաստատում եմ
Ախթալայի N 1 մ/դ
տնօրեն՝ _____ (Լ. [illegible])
(ստորագրություն)
15.09.2023թ.

Ուսումնական հաստատության
Դասվարի աշխատանքային
տարեկան ծրագիր
Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց
III դասարան
2023-2024 ուստարի
Դասվար՝ Ա. Ղազարյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները:
Դասարանի ընդհանուր բնութագիրը:

Երրորդ դասարանում սովորում է 21 աշակերտ՝ 10 տղա և 11աղջիկ: Նրանց մեջ աստիճանաբար ձևավորվում է կոլեկտիվ, արդեն նկատվում են նրանց միջև մտերմություն, ակտիվություն , աշխուժություն: Նկատվում են ընկերական համերաշխ հարաբերություններ: Միմյանց նկատմամբ հոգատար են, հարգալից: Երեխաները սիրով են հաճախում դպրոց, աստիճանաբար պահպանում են դպրոցի կարգուկանոնը, դպրոցում և դասարանում իրենց պահելու ձևը:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները:
Դասարանում աշակերտներին շարքերով նստեցնել՝ հաշվի առնելով նրանց հասակը, տեսողությունը և լսողությունը: Ամենօրյա հսկողություն սահմանել աշակերտների հաճախումներին: Հասնել նրան, որ դասարանում իսպառ վերանան անհարգելի բացակայությունները և ուշացումները: Կազմել դասարանի ամենօրյա հերթապահություն, ունենալ ուսուցչի փոքրիկ օգնականներ:

Զարգացնել ճանաչողական հետաքրքրություն, տրամաբանական մտածողության ձգտում, ուշադրություն, հիշողություն, երևակայություն, որոշումներ կայացնելու և եզրահանգման կարողություն: Սերմանել ընդունելի վարքի և էկոլոգիայի մշակույթի տարրեր, արթնացնել բարության և փոխօգնության զգացում, բնությունը պահպանելու ցանկություն, նրա նկատմամբ խնամք տածելու, խնայելու ձգտում:

1. **Հայեցի դաստիարակություն** - Կազմակերպել զրույցներ, միջոռացումներ հայկական տոների, սովորույթների մասին, տանել բացատրական աշխատանքներ:

2. **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** -Անցկացնել զրույցներ Հայաստանի անցյալի, հայ ժողովրդի համառ պայքարի ու սխրանքների մասին, ծանոթացնել հայ ազատամարտիկների հերոսական կյանքին, պատմել հայոց բանակի կազմավորման և կարևորության մասին:

3. **Գեղագիտական դաստիարակություն** -Դաստիարակել գեղեցիկը տեսնելու, զգալու, ընկալելու ունակությունը,այն վերածել կարողության, ապա հմտության: Ուշադրություն դարձնել անձնական հիգիենային, պահանջել, որ լինեն կոկիկ, գեղեցիկ սանրված, հագուստը մաքուր, եղունգները կտրած, ձեռքերը միշտ մաքուր: Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ (նպատակը՝ ճանաչել բնությունը, միջավայրում ճիշտ պահվածք դրսևորել) :

4. **Ֆիզիկական դաստիարակություն** -Ճիշտ կեցվածքի ձևավորման համար հարկավոր է զբաղվել սպորտով, առավոտյան կատարել մարմնամարզական վարժություններ: Հաճախակի կազմակերպել սպորտային միջոցառումներ, մրցույթներ:
5. **Աշխատանքային դաստիարակություն** -Մարդն իր նպատակին հասնելու համար պետք է աշխատասեր լինի, քանի որ ծուլությամբ ոչնչի չես հասնի: Յուրաքանչյուր բարիք աշխատանքի արդյունք է, հետևաբար նրանց մեջ պետք է սերմանել աշխատասիրություն:

6. **Բնապահպանական դաստիարակություն** -Կազմակերպել էքսկուրսիաներ տարվա տարբեր եղանակներին, ծանոթացնել բնության զարմանահրաշ երևույթներին: Բնությունը մաքրում է օդը, մեզ բերք ու բարիք է տալիս, ուստի այն պետք է պահել ու պահպանել:

7.Դպրոց-ընտանիք կապ - Կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ, նրանց ներգրավել երեխաների ուսման և առաջադիմության գործընթացին: Զրուցել հետևյալ թեմաներով՝«Ճանաչու՞մ ես արդյոք քո երեխային», «Ու՞նի քո երեխան ինքնուրույնություն»:Կարևորագույն խնդիր համարել դպրոց – ընտանիք կապը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

N	Բովանդակություն	Կատարման ժամկետը
1	«Գիտելիքն ուժ է » թեմայով զրույց-ձևավորել բազմակարծություն և աշխարհայացք	I շաբաթ 04.09.2023
2	«Գնահատիր ինքդ քեզ »: Ձևավորել արժեհամակարգ, կարողանալ կատարել ինքնավերլուծություն	II շաբաթ 11.09.2023
3	Զրույց «Իմ հին ու նոր Հայաստան»	III շաբաթ 18.09.202
4	«Կարող եմ օգտակար լինել » : Ձևավորել բարի և դրական հատկանիշներ:	IV շաբաթ 25.09.2023
5	«Աշակերտների իրավունքներն ու	V շաբաթ 02.10.2023

	պարտականությունները դպրոցում»: Մշակել կանոններ դպրոցում աշակերտների իրավ. ու պարտակ. մասին:	
6	«Եթե ես լինեի …» թեմայով քննարկում- նպատակ՝ վեր հանել նպատակները, դրանց հասնելու կարողությունները և հմտությունները	VI շաբաթ 09.10.2023
7	Զրույց՝«Երեխաները մոլորակի հարստությունն են» թեմայով	VII շաբաթ 16.10.2023
8	Զրույց՝ «Առողջ ապրելակերպ» թեմայով	VIII շաբաթ 30.10.2023
9	Զրույց «Շատ կարդաս, շատ բան կիմանաս»: Սեր արթնացնել դեպի գիրքը, բարձրացնել երեխաների ընթերցանության որակը:	IX շաբաթ 06.11.2023
10	«Աշունն իմ պատուհանից»: Զբոսանք դպրոցի մոտակա այգի: Գունավոր տերևների հավաքում:	X շաբաթ 13.11.2023
11	Ձևավորել հոգատար վերաբերմունք բոլորի նկատմամբ, մարդասիրություն և կարեկցանք տարեցների նկատմամբ: «Ջուրը՝ փոքրին, խոսքը՝ մեծին» ասացվածքի իմաստի ընկալում:	XI շաբաթ 20.11.2023
12	«Կենդանիները մարդկանց բարեկամներն են» – զրույց նրանց մասին: Կարդալ կենդանիների ու մարդկանց ընկերության մասին պատմություններ: Նկարել սիրած կենդանին:	XII շաբաթ 27.11.2023
13	«Պետական խորհրդանիշներ»: Կարևորել պետությունների անկախությունը և պետական խորհրդանիշները:	XIII շաբաթ 04.12.2023
14	Սիրում եմ ձյուն – ձմեռը: Նկարել ձմեռային սիրելի խաղերը, տեսարանները	XIV շաբաթ 11.12.2023
15	Ամանորյա միջոցառման նախապատրաստություններ: Ի՞նչ եմ ուզում Ձմեռ պապիկից: Ձմեռ պապիկին նամակագրություն :	XV շաբաթ 18.12.2023
16	«Ես Հայկի թոռն եմ»- ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին, ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	XVI շաբաթ 08.01.2024
17	Զրույց «Պատասխանատու քաղաքացի»: Բացատրել, թե ինչպիսին պետք է լինի յուրաքանչյուր քաղաքացին:	XVII շաբաթ 15.01.2024
18	Զրույց – «Ով աշխատի, նա կուտի» թեմայով: Ընթերցել համապատասխան հեքիաթ: Գունավոր թղթերով պատրաստել հեքիաթի հերոսներին, սերմանել աշխատասիրություն:	XVIII շաբաթ 22.01.2024
19	«Իմ սիրած մուլտֆիլմի կամ հեքիաթի հերոսը»: Պլաստիլինով ծեփել այդ հերոսին:Բնութագրել նրան՝ ինչու է սիրելի: Թեման կապել Հովհ. Թումանյանի հեքիաթների հետ:	XIX շաբաթ 29.01.2024
20	«**Ասացվածքնե**րի ամբիոն» - աշակերտներին	XX շաբաթ 05.02.2024

	ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասացվածքին, նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ, հարգանք, մարդասիրություն:	
21	«Բնական աղետներ» – ներկայացնել աղետները, նրանց առաջացման պատճառները, հետևանքները և դրանցից փրկության ելքերը:	XXI շաբաթ 12.02.2024
22	«Իմ սիրելի էակն աշխարհում» – զրույց մայրերի մասին, պատրաստել տոնական բացիկներ: Երգ ձոնել մայրերին:	XXII շաբաթ 19.02.2024
23	«Ազգային – միջազգային տոներ» – նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	XXIII շաբաթ 26.03.2024
24	«Ամենից լավ տունը»-հայրենասիրական դաստիարակություն:	XXIV շաբաթ 04.03.2024
25	«Ապագայի անիվ» -զրույց՝ «Ինչպիսին եմ ես ինձ պատկերացնում ապագայում (օրինակ 2-3 տարի հետո): Գիտակցելով սխալներս՝ չկրկնել ապագայում»: Արժևորել արժեհամակարգը և կատարել ինքնավերլուծություն:	XXV շաբաթ 11.03.2024
26	«Կարող եմ օգտակար լինել»: Այս թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ:	XXVI շաբաթ 18.03.2024
27	«Աշխարհը հրաշալի է» – քննարկել շրջակա միջավայրի վրա ազդող տարատեսակ գործոնները, քննարկել, թե ինչպես կարելի է պահպանել շրջակա միջավայրը: «Ինչպես վարվել աղբի հետ» – օգնել սովորողներին՝ գիտակցելու աղբի ու թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա:	XXVII շաբաթ 01.04.2024
28	«Հայոց մեծ եղեռն» - աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը: Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	XXVIII շաբաթ 08.04.2024
29	Հեքիաթի ընթերցում և քննարկում	XXIX շաբաթ 15.04.2024
30	Զրույց – «Տարվա եղանակները»: Նկարել տարվա սիրելի եղանակը:	XXX շաբաթ 22.04.2024
31	Բանավեճ՝ «Մարդը բնության տեր է, թե՞ հյուր »	XXXI շաբաթ 29.04.2024
32	«Ես ուզում եմ դառնալ»- մասնագիտական կողմնորոշում:	XXXIIշաբաթ 06.05.2024
33	Դասագրքերի ստուգում ,վերանորոգում	XXX IIIշաբաթ 13.05.2024
34	Տարեվերջյան զրույց – «Այս մեկ ուսումնական տարվա ընթացքում դպրոցի մասին իմ տպավորություններն ու ձեռքբերումները»:	XXXI Vշաբաթ 20.05.2023